

Հաշվետվություն

Իտալիայի Տուշա համալսարան այցի ընթացքում հանդիպել եմ իտալացի կոլեգաների հետ, ունեցել եմ զրույցներ, քննարկումներ, և հարցազրույց ինչպես մենակ այնպես էլ մյուս հայ կոլեգաներիս հետ, որոնց արդյունքում ծնվել են նոր գաղափարներ և մտքեր, որոնք աստիճանաբար կներդնեմ և կկիրառեմ իմ դասապրոցեսում: Մասնավորապես.

- 23.04 Ներկա եմ գտնվել Ջիուզեպպե Գարոֆալոյի «Ֆինանսական տնտեսագիտություն» առարկայի դասախոսությանը: Այնուհետև առանձնազրույց եմ ունեցել նրա հետ կապված հայ ուսանողների առաջադիմության, դասավանդվող առարկայի մեթոդաբանության և առարկայի բովանդակության մասին:
- 24.04 Նախնական պայմանավորվածության համաձայն Կարեն Սարգսյանի հետ հանդիպել ենք դեպարտամենտի տնօրեն Ստեֆանո Ումբերտինիի հետ, ով առաջարկեց տնտեսագիտական հարցերը հաջորդ օրը քննարկել Ջիակոմո Բրանկայի հետ:

Նույն օրը հանդիպել եմ Լուկա Կորեանիի հետ, ում հետ ունենք միանման հետազոտական ուղղություններ: Փոխանակվել ենք հողվածներով և առաջին իսկ հնարավորության դեպքում կսկսենք համատեղ աշխատանք:

- 26.04 Առավոտյան մյուս հայ գործընկերներիս հետ մասնակցել եմ ԳԱԱ-ի կողմից իրականացվող ներկայացմանը, այնուհետև հանձնել իտալերեն լեզվի B2 մակարդակի քննություն:

Օրվա երկրորդ կեսին Անջելա Ֆատտորետիի աջակցությամբ այցելել եմ Տուշա համալսարանի տեղային գրադարան, զրուցել տնօրենի և աշխատակիցներից

մեկի՝ Լուիզայի հետ, որի հիման վրա պատրաստում եմ նյութ ԳԱԱ ԳԿՄԿ Գրադարանային տեղեկավական աղբյուրներ մասնագիտության ուսանողների համար:

Ինչպես նաև այդ մի քանի օրերի ընթացքում կարճ զրույց եմ ունեցել մի քանի այլ դասախոսների հետ դասաբաշխման և մեթոդաբանության մասին:

Իտալիայի Տուշա համալսարան այցի, ինչպես նաև իտալացի կոլեգաներիս հետ ունեցած քննարկումների (առանց անհատականացնելու նրանց կարծիքները և աունները) և մտքերի փոխանակման արդյունքում ցանկանում եմ հանդես գալ որոշ առաջարկություններով.

1. Մեկ անգամ ևս համոզվեցի, որ մաթեմատիկան կազմում է տնտեսագիտության անբաժանելի մասը հատկապես մագիստրոսական կրթության մակարդակում և *պատրաստվում եմ* հաջորդ կիսամյակից սկսած աստիճանաբար ավելացնել իմ դասավանդվող առարկաներում մատուցվող մաթեմատիկական նյութի ծավալը: Ինչպես նաև գտնում եմ, որ խիստ անհրաժեշտ է և *առաջարկում եմ* ավելացնել մի քանի առարկա մասնավորապես էկոնոմետրիկա, վիճակագրություն, որոնք կմատուցվեն բարձրակարգ մասնագետների կողմից՝ շեշտադրելով առարկայի գործնական նշանակությունը տնտեսագետների համար:

2. Կրկին անգամ համոզվեցի, որ ժամանակակից միջազգային չափորոշիչներին համապատասխան կրթություն մատուցելու, ինչպես նաև միջազգային համագործակցությունների ծավալն ավելացնելու համար անգլերեն լեզվով դասավանդվող առարկաների ներգրավումը առարկայական ծրագրում պարզապես առաջնային է: Ուստի, ինքս *պատրաստ եմ* դասավանդել մասնագիտական առարկա անգլերեն լեզվով և *առաջարկում եմ* յուրաքանչյուր կիսամյակում ներառել առնվազն 3-4 առարկա անգլերեն լեզվով, որը ոչ միայն կընդլայնի միջազգային համագործակցությունն այլ երկրների հետ այլ նաև գրավիչ կլինի հայ դիմորդների համար: Ավելին, այս պարագայում հնարավոր կլինի հեռավար միացումներ ունենալ skype կամ bigbluebutton

ծրագրերի միջոցով օտարերկրյա գործընկերների հետ հենց դասընթացի ժամանակ և այլևս չի առաջանա «օտար լեզվի» խոչընդոտ:


3. Առաջաիկայում *կշարունակեմ* իմ բոլոր միջանկյալ քննությունները դարձնել խիստ գործնական կիրառելի ուսանողների համար, իսկ թեստային քննության պարագայում համակարգչային, որպեսզի գնահատման պարագաում մարդկային գործոնի դերը հնարավորինս նվազի: *Առաջարկում եմ* տնտեսագիտության ամբիոնում գնահատման որակը և անաչառությունը բարձրացնելու նպատակով գրավոր կամ թեստային աշխատանքների ժամանակ դասախոսները հնարավորություն չունենան տեսնելու ստուգվող ուսանողի անուն ազգանունը կամ թեստավորումն իրականացել և գնահատել համակարգչի միջոցով:

4. Կրկին կարևորում եմ համագործակցությունը դասախոսների և աշխատակազմի միջև փորձի փոխանակման և համատեղ դասընթացների կամ փոքր նախաձեռնությունների իրականացման միջոցով:

5. Վերջում կառաջարկեի նաև հատկապես որոշ տնտեսագիտական առարկաների պարագայում դասապրոցեսը դարձնել ամբողջական 80 րոպե, որպեսզի ուսանողների և դասախոսի մատուցված նյութի թելը չկտրվի, իսկ 5 րոպե հանգստանալ կարելի է ներկա-բացակա կամ դասին վերաբերող հարցեր քննարկելու միջոցով:

Շնորհակալություն ընձեռած հնարավորության համար:

Հարգանքով՝

Արամ Սիմոնյան 

տ. գ. թ., դոցենտ